այժմ և յառաջմէ մզկիթ մեր է, և վասն այսմ զոր ասէք թէ Սուրբ Յակոբ գոցա տրվի[1]), այս անմարթ է, քանզի վիճակ Հայոց է եւ ոչ Հոռոմոց։ Այլ եւս զընծայն ևս գրեալ ի մէջ թղթին և այս ամենայն առաքեաց զոմն ի նախարարաց իւրոց աստ։

Եւ եկին օր Շաբաթ (9 Յունուար) և նստան Զ-ից եկեղեցեաց իշխանքն և ընտրեցին արս ի մէնջ յամէն եկեղեցոյ Գ Գ և Դ Դ իշխան՝ վէքիլ արարեալ ամենայն ժողովրդեանն, զոր գնացին արք[2]) Ի և Իե-ից առ այն որ եկեալ էր ի փաշայէն և երաշխաւոր եղեն թէ զինչ ծախեսցի վասն բանիս՝ տեսցեն սոքա մինչև Տէր կամեսցի [և] յառաջանայ բանս և զլխակոր լիցին նախանախանձ (այապէս) ազգն Հոռոմոց. և ապա Վարդապետն Երուսաղէմայ և ի ժողովէ տացէ զայս զոր ի գրին յայտնեալ էր, և ստիպեալ հարկիւ և թախանձանօք եթէ Կանգնեցէ՛ք և տեսէք զայս։ Եւ գնացին[3]) առ վէզիրն, և ծալեալ վէզիրն զթուղթն՝ չտայ պատասխան նոցա և ոչ մի, այլ նենգեալ Յունաց առին կրկին էմր ի վերայ Եղիազարին, և նա փախեալ նստէր ի Շամ առ Թայարօղլի փաշային Շամայ։ Շաբաթ Պօղոսն մեռաւ։ Երեկոյիս զԿնաճիպատէն կախեցին։

Կիրակի (10 Յունուար). Երեկոյիս գնաց ազան յէտրէնէ։ Եւ քիւրէքճի արկին ի վերայ ամենեցուն կէս։

Գշի (12 Յունուար). զփուռս մեր աւրհնեցաք։

Դշի (13 Յունուար). Տնօրէն. և այսօր ելեալ գնացին յէտրէնէ։

Կիրակի ԺԷ-ի։

Դշի օրս (20 Յունուար) ել Ուլահի պարոնի քեհեան աստի[4]) սարուճայիւք և գնաց յէտրէնէ առ պարոնն զոր Ճիւան պէկ ասէին. աստ էր և ի թագաւորէն խիլայս զգեցուց վէզիրն պարոնութեան և ուղարկեաց

1) տվվի. 2) արս. 3) գնաց. 4) ասի.